ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1963 Общественные науки

ՍՍՌՄ-ի ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 40-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏ

ՍՍՌՄ-ի կազմավորման 40-րդ տարեդարձի առթիվ, 1962 թ. դեկտեմբերի 18-ին Հայկ. ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտը կազմակերպել էր գիտական նիստ։ Բացելով նիստը Ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Արտաշես Կարինյանն ասաց.

—Մեր պարտիայի XXII համագումարում ամենակտրուկ կերպով ընդգծվեց պատմական դեպքերի ու պրոբլեմների մարքսիստական լուսաբանության, լենինյան դրույթների ու գաղափարական պատգամների ճշգրիտ կիրառման մեծագույն կարևորությունը, անցյալում՝ Ստալինի անձի պաշտամունքի հետևանքով օրինականացված հակալենինյան արարքների ու սխալների վճռական դատափետման ու հաղթահարման անհրաժեշտությունը։ Սովետական Միության ԳԱ գիտական հիմնարկները նկատելի աշխատանք են կատարել այդ ուղղությամբ։ Սակայն այդ աշխատանքը պետք է ունենա ավելի կազմակերպված բնույթ։ Այսօր, համենայն դեպս, ակնորոշ է, որ հասարակական գիտությունների գիտական հիմնարկների այն աշխատությունները, որոնք պատրաստվել ու հրապարակվել են անհատի պաշտամունքի ազդեցության ներքո և չեն համապատասխանում մարքսիզմ-լենինիզմի կարևորագույն դրույթներին, պետք է ուշադրությամբ վերանայվեն ու վերամշակվեն։

Արտասահմանյան ռեակցիոն գործիչների շարքերում կլինեն, իհարկե, բացահայտ և քողարկված զանազան տիպի դրշակներ, որոնք կաշխատեն աղավաղել փաստերը, հարձակումներ գործել Սովետական Միության և Կոմունիստական պարտիայի վրա, սակայն, Վ. Ի. Լենինի ջանքերով հիմնված Կոմունիստական պարտիան միակն է, որ ժամանակին ինքն է նշել իր գործունեության առանձին սխալներն ու թերությունները, դրանով իսկ արտահայտելով մեր պարտիայի ամրությունն ու հզորությունը, նրա արտասովոր ժողովրդականությունը։

«ՍՍՌՄ-ի կազմակերպումը և նրա պատմական նշանակությունը» *թեմայով զեկուցում կարդաց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Հակոբյանը (կտպագրվի հաջորդ համարում)։*

«Անդրկովկասի ֆեդերացիան և նրա դերը երկրամասում սոցիալիզմի կառուցման գործում» *թեմայով զեկուցում կարդաց պատմական գիտությունների թեկնածու Հ. Ս. Կարապետյանը։ Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների ֆեդերացիայի կազմակերպման 40-րդ տարելիցին,—ասաց նա,—անհրաժեշտ է հետադարձ հայացք գցել երկրամասի ժողովուրդների կյանքում ֆեդերացիայի կատարած պատմական կարևորագույն դերի վրա, ըստ ամենայնի արժեքավորել այն հսկայական նվաճումները, որ ֆեդերացիայի մեջ մտնող ռեսպուբլիկաները պատմական կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեցին տնտեսական ու կուլտուրական շինարարության ասպարեզում։*

Անդրկովկասի ֆեդերացիան իր կենսունակությունը դրսևորեց երկրամասի ժողովուրդների կյանքի բոլոր բնագավառներում։ Նա ամրողջովին ու անվերապահորեն հաստատեց Լենինի այն հանճարեղ միտքը, որ Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների «սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»։

Զեկուցողը մատնանշում է այն անշահախնդիր տնտեսական օգնությունը, որ Սովետական կառավարությունը և անձամբ Վ. Ի. Լենինը ցույց էին տալիս Անդրկովկասի կոմունիստների՝ և երկրամասի նորաստեղծ սովետական ռեսպուբլիկաներին՝ ժողովրդական տնտեսության վերականգնման և ժողովրդի նյութական պայմանների բարելավման ուղղությամբ։

Զեկուցողը նշում է, որ տնտեսության բնագավառում Անդրկովկասի ռեսպուբլիկաների միավորման քայլերը սկսվել են դեռևս 1921 թվականի սկզբներին, երբ միավորվեցին երկաթուղային տրանսպորտը և ապա նաև արտաքին առևտուրը, իսկ ռեսպուբլիկաների ֆեդերատիվ միավորումը և ֆեդերացիայի կազմակերպման հարցը՝ որպես երկրամասի քաղաքական ու տնտեսական շահերից բխող անհետաձգելի խնդիր, հիմնականում դրվում է 1921 թվականի աշնա-

նից։ Ֆեդերացիայի կազմակերպման նախաձեռնողները եղել են Բաքվի նավթագործները, որոնց առաջարկությունը լիրմ պաշտպանություն ու հավանություն է գտել մյուս ռեսպուբլիկաների աշխատավոր զանգվածների կողմից։ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սովետական ռեսպուբլիկաների ֆեդերացիայի կազմակերպման պահանջը հավանության է արժանանում և պաշտպանություն գտնում նաև ՌԿ(բ)Պ Կենտկոմի և Վ. Ի. Լենինի կողմից։

Ապա զեկուցողն անդրադառնում է այն հսկայական դերին, որ Անդրֆեդերացիան իր գոյության 15 տարիների ընթացքում կատարեց Անդրկովկասի ազգությունների միջև սահմանային աննորմալությունները վերացնելու, եղբայրական փոխադարձ համագործակցություն հաստատելու, ժողովրդական կրթության ցանցը ծավալելու, նոր տեխնիկա-տնտեսական բազայի ստեղծման, երկրամասի ինդուստրացման, գյուղի սոցիալիստական վերակառուցման, կուլտուրական շինարարության աննախընթաց առաջընթացի բնագավառում։

Անդրֆեդերացիան,—եզրափակում է զեկուցողը,—կատարեց իր պատմական դերը. նա ոչ միայն վերականգնեց հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների դարավոր տնտեսական, կուլտուրական կապերն ու բարեկամությունը, որոնք դաշնակների, մենշևիկների ու մուսավաթականների բուրժուա-նացիոնալիստական քաղաքականության հետևանքով խախտվել էին, այլև հանդիսացավ մի օրգան, որն ապահովեց ռեսպուբլիկաների տնտեսական վերականգնումն ու սոցիալիստական ինդուստրացումը։

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ